ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2021 թվականի հունվարի 19-ին

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 17. Սպասարկման կենտրոնը

1. Սպասարկման կենտրոնների տարածքները սահմանվում են բնակչության քանակի, գործարքների, հաճախորդների ակտիվության վրա հիմնված տարածքային բաժանման սկզբունքով, իսկ սպասարկման կենտրոններին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերի չափանիշները՝ քաղաքացիների հարմարավետության, հերթերի արդյունավետ կառավարման, անվտանգության ապահովման, ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա:

2. Սպասարկման կենտրոնի աշխատակիցներն ընդունվում և աշխատանքից ազատվում են օրենքով սահմանված կարգով՝ ըստ սպասարկման կենտրոնի կազմակերպաիրավական ձևի (պետական կամ տեղական ինքնակառավարման հիմնարկ, իրավաբանական անձ):

3. Սպասարկման կենտրոնի՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման կամ դրանից բխող այլ գործառույթների սպասարկումն իրականացնում են առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձինք:

4. Սպասարկման կենտրոնների աշխատակիցների վերապատրաստումն իրականացնում է նախարարությունը:

5. Սպասարկման կենտրոնների աշխատակիցների վերապատրաստման կարգը սահմանում է նախարարը:

6. Գործակալության սպասարկման կենտրոնների նստավայրերի ցանկը հաստատում է նախարարը: Սպասարկման կենտրոնի գործառույթները կարող են իրականացնել պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, հանրային ծառայությունների միասնական գրասենյակների և Կառավարության լիազորած օպերատորները, ինչպես նաև քաղաքացիների սպասարկման ոլորտում գործառույթներ իրականացնող այլ սուբյեկտներ, որոնց ցանկը և նստավայրերը հաստատում է Կառավարությունը:

7. Գործակալության սպասարկման կենտրոնի գործառույթներ իրականացնող Կառավարության լիազորած օպերատորների ցանկը, օպերատորներին պատվիրակվող գործառույթների ցանկը, օպերատորների հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը և օպերատորների սպասարկման գրասենյակներին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է Կառավարությունը: